# ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ վարչապետին կից Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ

Քննարկում է հակակոռուպցիոն քաղաքականության՝
- ռազմավարություններ, ոլորտային ծրագրեր, իրավական ակտերի նախագծեր
- ծրագրերի իրականացման, կատարողականի և մոնիթորինգի ու գնահատման հաշվետվություններ
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններ
- քաղաքացիական հասարակության, գործարար ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքներ

### ՀՀ արդարադատության նախարարություն (Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն)

- Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրերի մշակում և մոնիթորինգ
- Հակակոռուպցիոն ծրագրերի, միջազգային պարտավորությունների մոնիթորինգ
- Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի քարտուղարության աշխատանքներ

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

### Էթիկայի հանձնաժողովներ

#### Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց

- Ազ պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով
- Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով
- ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով
- Քննիչների կարգապահական հանձնաժողով

#### Հանրային ծառայողների

- Քաղաքացիական ծառայություն
- Դիվանագիտական ծառայություն
- Մաքսային ծառայություն
- Հարկային ծառայություն
- Փրկարար ծառայություն
- Քրեակատարողական ծառայություն
- Հարկադիր ծառայություն
- Դատական կարգադրիչների ծառայություն
- Համայնքային ծառայություն

***

- Զինվորական ծառայողների (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի) կարգապահական հանձնաժողով
- Ազգային անվտանգության մարմիններում ծառայողների կարգապահական հանձնաժողով
- Ոստիկանության ծառայողների կարգապահական հանձնաժողով

- Հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների քննություն
- Հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին

### Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

- Վարքագծի տիպային կանոնների մշակում և պահպանման միասնականության ապահովում
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիությոան պահանջների և այլ սահմանափակումների կիրառման միասնականության ապահովում
- Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարում
- Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում իրավասու մարմիններին
- Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության ուսումնասիրություններ
- Հակակոռուպցիոն կրթական և հանրային իրազեկման ծրագրերի մշակում և իրականացում
- Կուսակցությունների ֆինանսական միջոցների, գույքի վերաբերյալ հաշվետվության ստուգում, հրապարակում, աուդիտի կազմակերպում
- Նախընտրական և քարոզչության ֆինանսավորման հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողության իրականացում *(ուժի մեջ է 2023 թվականի հունվարի 1-ից)*
- Հայտարարագրման գործընթացի կանոնակարգում
- Ապօրինի հարստացման առերևույթ կոռուպցիոն ռիսկերի բացահայտում
- Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը մասնակցություն

### Ազդարարման հարցերով պատասխանատու

- Կոռուպցիոն բնույթի, բարեվարքության կանոնների, շահերի բախման, հայտարարագրման հետ կապված խախտումների, հանրային շահերին ուղղված սպառնալիքի վերաբերյալ հաղորդումների հաշվառում և ընդունում
- Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառում և վերահասցեագրում
- Ազդարարի պաշտպանության միջոցների իրականացում

### Բարեվարքության հարցերով կազմակերպիչ

Բարեվարքության՝
- մասնագիտական խորհրդատվություն
- վերապատրաստման կարիքներ և ծրագրեր
- ուսումնասիրություններ
- հակակոռուպցիոն պլանների նախագծեր
- դեպքերի վիճակագրություն

## ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

### Հակակոռուպցիոն կոմիտե

- Ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների մինչդատական քրեական վարույթ
- Օպերատիվ – հետախուզական գործունեություն

### ՀՀ գլխավոր դատախազություն

#### Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն

- Կոռուպցիոն հանցագործությունների միասնական էլեկտրոնային հարթակի վարում
- Քրեական հետապնդում
- Մինչդատական քրեական վարույթի օրինականության հսկողություն
- Դատարանում մեղադրանքի պաշտպանում
- Դատարանների վճիռների և որոշումների բողոքարկում
- Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության հսկողություն

#### Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն

Ապօրինի ծագում ունեցող գույքի՝
- բռնագանձման վարույթ
- ուսումնասիրությունների իրականացում
- եզրակացության կազմում

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆ

- Կոռուպցիոն հանցագործությունների քննություն և պատժի սահմանում
- Պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանություն և պատժի սահմանում
- Ապօրինի գույքի բռնագանձման գործերի քննություն և պատժի սահմանում

USAID
ԱՄԵՐԻԿՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Սույն նյութը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Նյութի բովանդակության պատասխանատուն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն» է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

31 դեկտեմբեր 2021